ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի գիտխորհրդի՝
27.01.2025 թ. կայացած նիստի թիվ 9 արձանագրություն

ՕՐԱԿԱՐԳ

1. 2024-2025 ուսումնական տարվա առկա ուսուցման բակալավրիատի ու մագիստրատուրայի քննաշրջանի արդյունքների ամփոփում:
2. Դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզերի աշխատանքների կատարման ընթացքի քննարկում:
3. Անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների թեկնածություններ-ի հաստատում:
4. Հայցորդների ատեստավորում:
5. Ընթացիկ հարցեր:

Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի գիտխորհրդի թիվ 9 նիստին 36 անդամներից մասնակցում էին 25-ը:
Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի ֆակուլտետի դեկան Գ. Բարսեղյանը ողջունեց գործընկերներին և անդրադարձավ օրակարգի առաջին հարցին՝ 2024-2025 ուսումնական տարվա առկա ուսուցման բակալավրիատի ու մագիստրատուրայի քննաշրջանի արդյունքների ամփոփմանը: Նշվեց, որ քննաշրջանն անցել է բնականոն հունով:
Դեկանը անցավ օրակարգի երկրորդ հարցին՝ դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզերի աշխատանքների կատարման ընթացքին: Նշյալ աշխատանքներն ընթանում են ընթացակարգին համապատասխան:
Այնուհետև անդրադարձ կատարվեց օրակարգի երրորդ հարցին՝ անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների թեկնածությունների հաստատմանը:

ԼՍԵՑԻՆ՝ Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի՝ անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների թեկնածությունների հաստատման հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Միաձայն քվեարկության արդյունքում որոշվեց ընթացիկ ուսումնական տարվա **երկրորդ** կիսամյակում հետևյալ ուսանողներին առաջադրել անվանական կրթաթոշակի:

Հովսեփյան Լիլիթ Շահենի - «Լեզվաբանություն» մասնագիտություն, «Անգլերեն լեզու, իտալերեն լեզու և հաղորդակցություն» բակալավրի կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողուհի (Վ. Սարոյանի անվան կրթաթոշակ),

Ղազարյան Վիկտորյա Գարիկի - «Լեզվաբանություն» մասնագիտություն, «Միջմշակութային հաղորդակցություն (անգլերեն)» բակալավրի կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի (Ֆ. Վերֆելի անվան կրթաթոշակ)։
Հակոբյան Ինա Դավիթի - «Լեզվաբանություն» մասնագիտություն, «Անգլերեն լեզու և իսպաներեն լեզու և հաղորդակցություն» բակալավրի կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողուհի (Հ. Աճառյանի անվան կրթաթոշակ)։

ԼՍԵՑԻՆ՝ Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի հայցորդների ատեստավորման հարցը։

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Միաձայն քվեարկության արդյունքում որոշեցին.
Դրական գնահատելով անգլիական բանասիրության ամբիոնի ներքոնշյալ հայցորդների կատարած աշխատանքը՝ ատեստավորել նրանց.
Սարգսյան Աննա Գրիշայի
Միրիջանյան Վարդուհի Գագիկի
Դավթյան Նանե Սարգսի
Ավետիսյան Միլենա Ստեփանի։

Դրական գնահատելով արտասահմանյան գրականության ամբիոնի ներքոնշյալ հայցորդի կատարած աշխատանքը՝ ատեստավորել նրան. Մայիլյան Ալվարդ Սամվելի։

ԵԼՀ ֆակուլտետի դեկան և
գիտխորհրդի նախագահ,
բ.գ.թ., դոցենտ՝ Գ. Ռ. Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար, բ.գ.թ., դոցենտ՝ Մ. Գ. Դալալյան

27.01.2025 թ.